Արձանագրություն N 2

«ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/31» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի եղանակով ԵՊՀ կարիքների համար Լաբորատոր սարքավորումների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հան հանձնաժողովի նիստի

ք. Երևան 09.02.2024 թ.

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Ն. Ավթանդիլյան՝ (Գնահատող հանձնաժողովի նախագահ),

հանձնաժողովի անդամներ՝

Լ. Վանյան՝ (Գնահատող հանձնաժողովի անդամ),

Է. Նաղիրյան՝ (Գնահատող հանձնաժողովի անդամ),

հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Աղուզումցյան՝ (Գնահատող հանձնաժողովի քարտուղար):

1. Էլեկտրոնային աճուրդի եղանակով գնման ընթացակարգի շրջանակներում հրավերի պարզաբանման տեքստը հաստատելու մասին

1.1 Հիմք ընդունելով **08.02.2024 թ.** ստացված հրավերի վերաբերյալ ստացված հարցումը և, ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 14-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց՝

- Հաստատել հրավերի պարզաբանման մասին հայտարարության տեքստը և հրապարակել գնումների պաշտոնական տեղեկագրում

Հարցադրում N 1 (08.02.2024 թ.) 6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: 6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով: Սրանք հրավերում առկա պայմանագրի նախագծից են մեջբերված: Ստացվում է, որ Ձեր կողմից կայացված որոշման կատարմանը Դուք չեք հետևում

Պարզաբանում N 1 (09.02.2024 թ.) Հարգելի գործընկեր, տեղեկացնում ենք Ձեզ, որ տույժերի և տուգանքների կիրառման կարգը սահմանված է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 33-րդ կետի 4-րդ ենթակետով: Տեղեկացնում ենք նաև, որ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամը խստորեն հետևում և պահպանում է Հայաստանի Հանրապետության գնումների մասին օրենսդրությամբ սահմանված բոլոր դրույթները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների և քարտուղարի անունը

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել էլեկտրոնային աճուրդի ավարտից հետո:

Հանձնաժողովի Նախագահ՝	Ն. Ավթանդիլյան	ստորագրություն
Անդամներ՝	Լ. Վանյան	ստորագրություն
	Է. Նաղիրյան	ստորագրություն
Քարտուղար՝	Ա. Աղուզումցյան	ստորագրություն